ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

ք.Երևան, Գ. Քոչարի 21[ա]

☎ 54-35-02

01/12/ 2014թ. N 05 – 456

« ՇՀԾՁԲ-11/2» ծածկագրով
շրջանակային համաձայնագրեր
մասնակիցներին ըստ ցանկի

Հարգելի մասնակից,

« ՇՀԾՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ-ի կարիքների համար անհրաժեշտություն է առաջացել ձեռք բերելու «Գնումների աջակցման կենտրոնի» ՊՈԱԿ-ի և նշված ծածկագրով շրջանակային համաձայնագրով իրականացվող գնումների ցանկում ներառված կազմակերպությունների միջև կնքված շրջանակային համաձայնագրերով նախատեսված ծառայությունը:

Սույն հրավերի (ծանուցման) ծածկագիր է հանդիսանում **«ԿԸՀ- ՇՀԾՁԲ-11/2/12»**:

Հայտնում ենք, որ գնման առարկայի վերաբերյալ Ձեր կազմակերպության հայտն անհրաժեշտ է ներկայացնել www.armeps.am կայքի (այսուհետև՝ կայք) միջոցով ոչ ուշ քան 2014թ. դեկտեմբերի 03-ը, ժամը 11[00] -ն:

Ընթացակարգի հանձնաժողովի քարտուղարն է Երանուհի Սամվելյանը:

Հայտերը կբացվեն 2014թ. դեկտեմբերի 03-ին, ժամը 11[00]-ին կայքի միջոցով:

Գնման առարկա է հանդիսանում ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ-ի կարիքների համար ավիասպասարկման ծառայությունների ձեռքբերումը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ-ի կարիքների համար՝ ավիասպասարկման ծառայությունների ձեռք բերման (որը կազմված է 1 չափաբաժնից) տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև գնման առարկայի մասնագիրը, տեխնիկական տվյալները և այլ ոչ գնային պայմանների ամբողջական և համարժեք նկարագրությունը կազմում են պայմանագրի անբաժանելի մասը, որի նախագիծը ներկայացված է սույն հրավերի (ծանուցման) N 1 հավելվածում:

Մասնակիցները հայտով ներկայացնում են իրենց կողմից հաստատված՝

ա. գնման ընթացակարգին մասնակցելու դիմում (Հավելված N 5), ընդ որում պարտադիր է նշել Մասնակցի էլեկտրոնային փոստի հասցեն,

բ. գնային առաջարկ (Հավելված N 5.1):

Հայտն անհրաժեշտ է ներկայացնել «ՇՀԾՁԲ-11/2» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված կարգով:

Կից ներկայացնում ենք կնքվելիք պայմանագրի նախագիծը:

Մասնակցի կողմից հայտի ներկայացումը պարտադիր չէ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի աշխատակազմ ՊԿՀ-ի էլեկտրոնային փոստի հասցեն է՝ YeranuhiS@elections.am:

Առդիր՝ էջ:

Հարգանքով՝

Լ.Գրիգորյան

Կատարող՝ Ե.Սամվելյան,
հեռ .56-28-57